ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

Դարգև Բարսեղյան

Արցախի Հանրապետության կրոնական իրավիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ գրեթե չկան: Քննական վերլուծության ենթարկված չեն Արցախի հասարակության կրոնական կյանքի առանձնահատկությունները, կրոնի ոլորտը կարգավորող օրենսդրությունը և կրոնպետություն բազմաբնույթ հարաբերությունները: Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել Արցախի Հանրապետության կրոնին, կրոնական կյանքին առնչվող օրենսդրությունը՝ վեր հանելով այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են հայկական երկրորդ պետությունում կրոնպետություն հարաբերություններին: Արցախի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է ԱՀ Սահմանադրությամբ և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքով, որոնք հիմնականում կրկնում են ՀՀ Սահմանադրության և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի դրույթները: Սակայն հայկական երկու պետությունների կրոնին առնչվող օրենսդրության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշակի տարբերություններ կան, որոնք պայմանավորված են ԱՀ առանձնահատկություններով և յուրատեսակ կարգավիճակով: ՀՀ Սահմանադրության՝ կրոնին առնչվող հոդվածները ԱՀ Սահմանադրության մեջ գրեթե նույնն են, հիմանականում կրկնվում են, իսկ տարբերությունները հարմարեցված են ԱՀ-ի առանձնահատկություններին: ԱՀ կրոնական կյանքը հիմնականում կարգավորվում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով, որի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս օրենքը ևս ՀՀ նմանատիպ օրենքից շատ չի տարբերվում, իսկ մի քանի տարբերությունները հոդվածի քննարկման հիմնական առարկան են: Դրանք վերաբերում են կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամ-

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ների քանակին, կրոնական կազմակերպությունների գործունեության առանձնահատկություններին, Արցախում որոշ ոլորտներում մենաշնորհ ունեցող Հայոց եկեղեցու գործունեությանը, Արցախի կրոնի գործերով պետական լիազորված մարմնի լիազորություններին և այլն:

Արցախի Հանրապետությում կրոնական իրավիճակը, կրոնական կյանքը և կրոնական կազմակերպությունների գործունեությունը հիմնականում նույնն է, ինչ Հայաստանի Հանրապետությունում: Նույնն են գործող հիմնական կրոնական կազմակերպություններն ու կառույցները, նույնն է կրոնական պրակտիկան, նույնն է վերաբերմունքը կրոնների նկատմամբ: Արցախի Հանրապետությունում կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորվում է ԱՀ սահմանադրությամբ[1] և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքով[2]: Արցախում գործող կրոնական կազմակերպությունների ցանկը պաշտոնապես հրապարակված չէ (կարծում ենք պատճառը Արցախի Հանրապետության յուրատեսակ կարգավիճակն է և անվտանգային խնդիրները), սակայն մեր ձեռքի տակ այդպիսի ցուցակ առկա է[3]: Ընդհանրապես, անվտանգային տեսանկյունից կրոնի ոլորտը համարվում է յուրաքանչյուր պետության զգայուն ոլորտներից մեկը, ինչն էապես զգալի է Արցախի Հանրապետությունում՝ հատկապես 44-օրյա պատերազմից հետո:

Քանի որ Արցախում գործող և պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների ցանկը պաշտոնապես հրապարակված չէ,

---

[1] **Արցախի Հանրապետության Սահմանադրություն,** ընդունված՝ 2017թ. փետրվարի 20, http://www.nankr.am/hy/1838, մուտք՝ 12.06.2022թ., այսուհետ՝ **ԱՀ Սահմանադրություն**:

[2] **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**, ընդունված՝ 2008թ. նոյեմբերի 26-ին, http://www.nankr.am/hy/688. մուտք՝ 12.06.2022 թ., այսուհետ՝ **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

[3] Այդ ցուցակը, ինչպես նաև Արցախի կրոնական խճապատկերին առնչվող այլ փաստաթղթեր մեզ սիրահոժար տրամադրել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակույթի և երիտասարդության վարչության կրոնի և ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ **Աշոտ Սարգսյանը**, որին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

մենք ևս զերծ կմնանք այն հրապարակելուց, սակայն Արցախի կրոնական կյանքին առնչվող օրենսդրությունը և Արցախում գործող կրոնական կազմակերպությունների գործունեության մի քանի կարևոր դրվագներ կքննենք առանձին՝ փորձելով ստանալ Արցախի կրոնական կյանքի օրենսդրական կարգավորումների ընդհանուր խճապատկերը:

Ինչպես արդեն նշեցինք, Արցախում կրոնի ոլորտը կարգավորվում է ԱՀ Սահմանադրությամբ և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքով: Այս դեպքում ակնհայտ են ՀՀ և ԱՀ ընդհանրությունները կրոն-պետություն հարաբերությունների կարգավորման տեսանկյունից: Սակայն հայկական երկու պետությունների կրոնին առնչվող օրենսդրության համեմատական վերլուծությունը, այնուամենայնիվ, ի հայտ է բերում որոշակի տարբերություններ և Արցախում կրոնական կյանքի որոշ առանձնահատկություններ: Հայաստանում կրոնական կազմակերպությունների գործունեությանը առնչվող որոշակի հարցեր արդեն քննարկել ենք մեր հոդվածներից մեկում[1]: Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունները գործում են ՀՀ Սահմանադրության և ոլորտը կարգավորող մի շարք օրենքների և նորմատիվային ակտերի շրջանակում: Նույնն է նաև Արցախի դեպքում:

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է (հոդված 17), որ «1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: 2. կրոնական կազմակերպությունները անջատ են պետությունից»[2]: ՀՀ Սահմանադրությունը նաև հռչակում է (հոդված 18), որ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում»[3]: ԱՀ Սահմանադրությունը գրեթե նույնությամբ (նույնիսկ հոդվածների համարներով) կրկնում է ՀՀ Սահմանադրությամբ ամ-

---

[1] **Պ. Բարսեղյան,** Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների դասակարգման մի քանի հարցեր // **Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու,** Դ, Ե., 2020, էջ 125-133:

[2] **ՀՀ Սահմանադրություն**, ընդունված՝ 16.12.2015թ., https://bit.ly/3UB81ff, մուտք՝ 15.06.2022թ., այսուհետ՝ **ՀՀ Սահմանադրություն:**

[3] **Նույն տեղում:**

րագրված դրույթները՝ «Հոդված 17. Պետությունը և կրոնական կազմակերպությունները. 1. Արցախի Հանրապետությունում ճանաչվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: 2. Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից: Հոդված 18. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին. Արցախի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»[1]: Փաստացի ԱՀ Սահմանադրության հոդված 18-ում բացակայում է միայն ՀՀ Սահմանադրության նույնատիպ հոդվածի 2-րդ կետը, որում սահմանվում է. «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»[2]: Այս կետի բացակայությունն էլ ինքին հասկանալի է, քանի որ Արցախի Հանրապետությունում, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, չկա օրենք պետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին[3]:

Նույնը չենք կարող ասել ԱՀ Սահմանադրության հոդված 41-ի մասին, որը բովանդակային առումով բավականին տարբերվում է ՀՀ Սահմանադրության նմանատիպ հոդվածից: ՀՀ Սահմանադրության հոդված 41-ը բավականին ծավալուն է.

«Հոդված 41. Մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձեւերով արտահայտելու ազատությունը:

2. Մտքի, խղճի եւ կրոնի ազատության արտահայտումը կարող է

---

[1] **ԱՀ Սահմանադրություն**

[2] **ՀՀ Սահմանադրություն**:

[3] Տե՛ս **«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ օրենք**, ընդունված՝ 2007թ. փետրվարի 22-ին, https://bit.ly/3xRAow4, մուտք՝ 15.06.2022թ., այսուհետ՝ **Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ օրենք**:

սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:

4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են եւ օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է օրենքով»[1]:

Ի տարբերություն սրա, ԱՀ Սահամադրության 41-րդ հոդվածը շարադրված է ավելի կարճ և իրականում ՀՀ նույնանուն հոդվածի համառոտ շարադրանքն է, մանրամասն ներկայացված չէ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, բացակայում է երրորդ կետով սահմանված յուրաքանչյուր քաղաքացու՝ զինվորական ծառայությունը այլընտրանքայինով փոխարինելու իրավունքը (սա բացատրվում է նրանով, որ ի տարբերություն Հայաստանի հանրապետության, Արցախում չկա այլընտրանքային ծառայության մասին օրենք[2]), ինչպես նաև՝ հատուկ շեշտված չէ կրոնական կազմակերպությունների իրավահավասարությունը և ինքնավարությամբ օժտվածությունը:

ԱՀ Սահմանադրության հոդված 41-ում ասվում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

2. Մտքի, խղճի և դավանանքի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»[3]:

---

[1] **ՀՀ Սահմանադրություն**:

[2] «**Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենք,** ընդունված 17.12.2003թ., https://bit.ly/3dKu0zV, մուտք՝ 10.06.2022թ.:

[3] **ԱՀ Սահմանադրություն:**

Սահմանադրությունից զատ՝ ԱՀ կրոնական կյանքը առավելապես կարգավորվում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքով, որի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս օրենքը ևս ՀՀ նմանատիպ օրենքից շատ չի տարբերվում: Մասնավորապես ՀՀ և ԱՀ նույնանուն (Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին) օրենքների նախաբանը և հոդվածների բովանդակությունը գրեթե ամբողջությամբ, բառացիորեն նույնական է, միայն այն տարբերությամբ, որ «Հայաստանի Հանրապետություն» անունը փոխարինված է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» անվամբ: Միաժամանակ հարկ է նշել, որ որոշակի տարբերություններ, այնուամենայնիվ, առկա են Արցախի օրենքում, որոնք էլ դարձել են մեր քննության հիմնական առարկան: Մասնավորապես.

- Եթե «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (հոդված 5, կետ «ե»)[1] քաղաքացիների խումբը կրոնական կազմակերպություն է ճանաչվում առնվազն 50 հավատացյալ անդամ ունենալու դեպքում, ապա ԱՀ նմանատիպ օրենքը հացատացյալների քանակ է սահմանում 100-ը (հոդված 5, կետ 5), ինչպես նաև հավելում. «Մինչև 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից և այլ հանգամանքներից»[2]:
- Որոշակի հավելումներ կան «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքի հոդված 7-ում: ՀՀ նմանատիպ օրենքի այս հոդվածի բովանդակությունը հիմնականում պահպանված է, սակայն որոշ դեպքերում, հավանաբար արցախյան իրականության առանձնահատկությունները հաշվի առնելով, առկա են որոշակի լրացումներ: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքի հոդված 7-ի կետ 3-ը սահմանում է, որ «Զորամասերում կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ կարող է կատարել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին»[3], իսկ ՀՀ նմանատիպ օրենքում առկա «... մնացած դեպքերում հրապարակային ժամասացությունները, կրոնական ծեսերն ու

---

[1] Տե՛ս **«Խղճի ազատության եվ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք**:

[2] **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

[3] **Նույն տեղում:**

արարողությունները կատարվում են ժողովների, հանրահավաքների, ցույցերի ու երթերի համար սահմանված կարգով» հատվածը[1] ԱՀ օրենքը լրացրել է հետևյալ նախադասությամբ. «Նման միջոցառումների համար դահլիճներ, համերգասրահներ և այլ տարածքներ հատկացվում են միայն գրանցված կրոնական կազմակերպություններին՝ նախօրոք այդ հարցը համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրոնի գործերով պետական լիազորված մարմնի հետ»[2]: Նույնպիսի հավելում կա նաև հոդված 7-ի 9-րդ կետում, որով նախատեսված է Արցախի կրոնի գործերով պետական լիազորված մարմնի համաձայնությունը արտասահման գործուղման՝ «...ուխտագնացության, ժողովների կամ կրոնական այլ միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև ուսման կամ հանգստի նպատակով»[3]: Նաև հատուկ ամրագրված է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գրանցված կրոնական և այլ կազմակերպությունները, հիմնարկներն ու պաշտոնատար անձինք օտարերկրյա կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն են հրավիրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրոնի գործերով պետական լիազորված մարմնի միջոցով»[4]: Կարող ենք փաստել, որ այսպիսի լիազորություններ Արցախի կրոնի գործերով պետական լիազորված մարմնին տալը բավականին ընդլայնում է նրա գործունեության ոլորտը և ազդեցության շրջանակը, ինչը ՀՀ նմանատիպ պետական լիազորված մարմինը (ՀՀ վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժին) չունի:

- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքի հոդված 8-ը արգելում է հոգեորսությունը Արցախի Հանրապետությունում, ինչը նույնությամբ կրկնում է ՀՀ նմանատիպ օրենքի 8-րդ հոդվածը՝ միայն մեկ տարբերությամբ[5]: ԱՀ օրենքը «հո-

---

[1] Տե՛ս **«Խղճի ազատության եվ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք**:

[2] Տե՛ս **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

[3] **Նույն տեղում:**

[4] **Նույն տեղում:**

[5] **Նույն տեղում:** Տե՛ս նաև **«Խղճի ազատության եվ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:**

գեորսություն» եզրի կողքին փակագծում ավելացնում է «դավանաորսություն» եզրը, ինչն անհասկանալի է զուտ մասնագիտական առումով: Նախ «հոգեորսություն» եզրի կիրառությունը և դրա սահմանման բացակայությունը կարելի է համարել վիճահարույց երկու երկրների օրենքներում էլ: Եթե այս եզրը համարենք կրոնագիտական շրջանակներում հայտնի «պրոզելիտիզմ» եզրի ուղղակի թարգմանություն, ապա լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի ԱՀ օրենքում «դավանաորսություն» եզրի կիրառությունը, քանի որ այս եզրը կրոնագիտական մասնագիտական բառապաշարում կիրառելի չէ:

- Որոշակի փոփոխության է ենթարկված նաև «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, որը սահմանում է, որ «... կրոնական կազմակեպությունները, որոնց հոգեւոր կենտրոնները գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, չեն կարող ֆինանսավորվել այդ կենտրոնների, ինչպես նաեւ դրսում գտնվող քաղաքական կազմակերպությունների կողմից»[1]: Անշուշտ այս հոդվածի բովանդակությունը լիովին հասկանալի է, սակայն ԱՀ նմանատիպ օրենքի նույն հոդվածում արված բովանդակային փոփոխությունները կարող են որոշակի հարցեր առաջացնել և թյուրըմբռնման պատճառ դառնալ: Այսպես՝ ԱՀ օրենքը սահմանում է. «Այն կրոնական կազմակերպությունները, որոնց հոգևոր կենտրոնները գտնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս, չեն կարող ֆինանսավորվել այդ կենտրոնների կողմից: Կրոնական կազմակերպությունները չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների կողմից և ֆինանսավորել նրանց»[2]: Այս դեպքում անհասկանալի է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս» գտնվող հոգևոր կենտրոնների նկատմամբ սահմանափակումները, քանի որ ՀՀ օրենքի դեպքում «ՀՀ տարածքից դուրս» արտահայտությունը հասկանալի է և հստակ, իսկ «Լեռնային Ղարաբաղի տարածքից դուրս» արտահայտությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության վրա ևս, ինչը ենթադրում է, որ ԱՀ տարածքում գործող կրոնական կազմակերպությունները, որոնք փաստացի ՀՀ-ում գործող կրոնական կազմակերպություն-

---

[1] **Նույն տեղում:** Տե՛ս նաև **«Խղճի ազատության եվ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:**

[2] Տե՛ս **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք:**

ների ստորաբաժանումներ են, պետք է ընդհանրապես ֆինանսական որևէ օժանդակություն չստանան ՀՀ-ում գործող իրենց հիմնական կենտրոններից: Այս դեպքում խոսքը վերաբերում է թե՛ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմին, թե՛ Արցախի Հայ կաթողիկե եկեղեցուն, թե՛ Արցախում գործող ավետարանական հարանվանություններին, թե՛ նաև այլ հարանվանություններին և աղանդներին, որոնք, ըստ էության, Հայաստանում գործող նմանատիպ կրոնական կառույցների արցախյան տարբերակներն են:

- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի առաջին հատվածի բովանդակությունը ԱՀ նմանատիպ օրենքում անփոփոխ է, իսկ ազգային եկեղեցու մենաշնորհ հանդիսացող առաքելությունների իրագործմանը վերաբերող կետերում կան լրացումներ, ինչը ՀՀ-ում գործող «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ օրենքում ամրագրված որոշ դրույթների տեղայնացումն է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքում: Օրինակ՝ ԱՀ օրենքի հոդված 17-ի երկրորդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված է. «... նպաստել ժողովրդի հոգևոր կրթությանը, օրենքով սահմանված կարգով՝ նաև պետական կրթական հաստատություններում, որտեղ կրոնի դասավանդումը թույլատրվում է միայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանության հիմքի վրա և իրագործվում է Հայ Եկեղեցու կողմից համապատասխան որակավորում և թույլտվություն ստացած ուսուցիչների ուժերով»[1]: Նախ պետք է հատուկ շեշտենք այն կարևոր հանգամանքը, որ այս հավելման մեջ օգտագործվում է «Կրոնի դասավանդում» արտահայտությունը, ինչն անորոշ է և լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի, քանի որ ո՛չ ՀՀ, և ո՛չ էլ ԱՀ հանրակրթական դպրոցներում «Կրոն» առարկա չի դասավանդվում (առարկան կոչվում է «Հայոց եկեղեցու պատմություն»): Իսկ ընդհանրապես պետք է փաստենք, որ այս հավելումը «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ Օրենքի նմանատիպ հոդվածի («... մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական

[1] Տե՛ս **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

ծրագրի եւ դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը եւ դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները»[1]) բովանդակային որոշակի փոփոխությունների ենթարկված տարբերակն է՝ հարմարեցված Արցախում Հայոց եկեղեցուն տրված մենաշնորհային գործունեությանը: Նույնն է նաև հիշյալ հոդվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետը, որը սահմանում է, որ եկեղեցու առաքելություններից է «մշտական հոգևոր ներկայացուցիչ ունենալ հիվանդանոցներում, զառամյալների և հաշմանդամների տներում, զորամասերում, ազատազրկման վայրերում (ներառյալ՝ քննչական մեկուսարաններում)»[2]: Սա ևս «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ Օրենքի հոդված 10-ի վերաշարադրանքն է. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի ունենալու մշտական հոգեւոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, մանկատներում, տուն-ինտերնատներում, զորամասերում, ազատազրկման վայրերում, ներառյալ՝ քննչական մեկուսարաններում»[3]: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքի այս հոդվածի 3-րդ կետը ՀՀ նմանատիպ օրենքում բացակայում է, իսկ ԱՀ օրենքում ևս մեկ անգամ շեշտադրվում է Հայոց եկեղեցու գործունեությանը կարևորությունը. «Հայ Եկեղեցու միջնորդության դեպքում տաղավարային տոներին հաջորդող երկուշաբթի աշխատանքային օրը տեղափոխվում է նախորդ շաբաթ օրը»[4]:

- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքի հոդված 20-ը էականորեն տարբերվում է ՀՀ նմանատիպ օրենքի հոդված 20-ից: Եթե ՀՀ օրենքը սահմանում է, որ «Քաղաքացիական կացության ակտերի փոխհամաձայնեցված եկեղեցական գրանցումը պետությունը ճանաչում է որպես օրինական ուժ ունեցող գործողություն՝ համապատասխան բոլոր հետեւանքներով»[5], ապա

---

[1] Տե՛ս **«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ Օրենք**:

[2] Տե՛ս **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

[3] Տե՛ս **«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ Օրենք**:

[4] Տե՛ս **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

[5] Տե՛ս **«Խղճի ազատության եվ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք**:

ԱՀ օրենքի հոդված 20-ը բոլորովին այլ բովանդակություն ունի՝ «Պետությունը ճանաչում է խոստովանության գաղտնիությունը: Քննչական և դատական ատյաններում որպես վկա չի կարող հարցաքննվել ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը գործի այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ»[1], ինչը «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ Օրենքի հոդված 12-ի (Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ իրավապահ մարմինների հարաբերությունները) որոշակի փոփոխությունների ենթարկված կրկնությունն է. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է եկեղեցական խոստովանության գաղտնիությունը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւորական-խոստովանահայրը՝ որպես վկա, չի կարող հարցաքննվել այն հանգամանքների մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ»[2]:

- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքի 22-րդ հոդվածը որոշակի ընդհանրություններ ունի ՀՀ օրենքի նմանատիպ հոդվածի հետ, սակայն բովանդակային առումով բավականին տարբեր է: Այս դեպքում հստակ սահմանված են պետություն-կրոնական կազմակերպություններ բազմաբնույթ հարաբերությունները և լիազորված մարմնի որոշ գործառույթներ:
- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքից բացակայում են ԱՀ նմանատիպ օրենքի 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածները, որոնցով կարգավորվում է «... Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը»[3]: Սա կարող ենք համարել կարևոր քայլ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքը առավել ամբողջական դարձնելու և որոշ հոդվածների տարընթերցումները բացառելու առումով, քանի որ ՀՀ նմանատիպ օրենքի բացերից մեկը կարող ենք համարել օրենքի դրույթները խախտելու համար հստակ սահմանված պատասխանատվության բացակայությունը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ «Խղճի ազատության և կրոնա-

---

[1] Տե՛ս **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

[2] Տե՛ս **«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» ՀՀ Օրենք**:

[3] Տե՛ս **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենք**:

կան կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքը ՀՀ նմանատիպ օրենքի գրեթե ամբողջական կրկնությունն է, որոշակի հավելումներով և ձևափոխումներով, որոնք, անշուշտ, առավել ամբողջական և քիչ խոցելի են դարձնում օրենքով կարգավորվող կրոնական կյանքը ԱՀ-ում: Երկու երկրների «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքների հիմնական տարբերությունները ԱՀ օրենքում առկա որոշակի փոփոխություններն ու հավելումներն են, որոնք Արցախի կրոնական կյանքի յուրատեսակ կողմերն ու առանձնահատկությունները վեր հանելու, ՀՀ օրենքը տեղայնացնելու, ինչպես նաև ԱՀ-ում Հայոց եկեղեցու յուրատեսակ կարգավիճակը շեշտելու հետևանք են: Միաժամանակ պետք է նշել, որ այժմ շրջանառության մեջ է «Մտքի, խղճի, դավանանքի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը[1], որն էական փոփոխությունների է ենթարկված և մասնագիտական տեսանկյունից առավել խորքային ուսումնասիրության և վերլուծության կարիք ունի:

Բանալի բառեր՝ *Արցախ, պետություն, կրոն, եկեղեցի, սահմանդրություն, օրենք, կրոնական կազմակերպություն:*

ЗАКОНОДАТЕЛЬСТВО, РЕГУЛИРУЮЩЕЕ РЕЛИГИОЗНУЮ ЖИЗНЬ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Паргев Барсегян

Ключевые слова: *Арцах, государство, религия, церковь, конституция, закон, религиозная организация.*

Почти нет исследований о религиозной ситуации в Республике Арцах: Не подвергнуты анализу особенности религиозной жизни общества Арцаха, регулирующее сферу религии законодательство и многогранные отношения религия-государство: Целью данной статьи является изучение законодательства, касающегося религии и религиозной жизни Республики Арцах и выделение особенностей, характерных для религиозно-государственных отношений во втором армянском государстве. Деятельность религиозных организаций в Республике

---

[1] Տե՛ս **«Մտքի, խղճի, դավանանքի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Արցախի Հանրապետության օրենք,** նախագիծ / https://bit.ly/3C9wdOG, մուտք՝ 16.06.2022թ.:

Арцах регулируется Конституцией Республики Арцах и Законом Республики Арцах «О свободе совести и религиозных организациях», которые в основном повторяют положения Конституции Республики Армения и закона «О свободе совести и религиозных организациях» РА. Однако сравнительный анализ законодательства, касающегося религии двух армянских государств, показывает, что существуют определенные различия, обусловленные особенностями и своеобразным статусом Республики Арцах. Статьи, связанные с религией Конституции Республики Арцах, почти одинаковы в Конституции Республики Армения, в основном повторяются, а различия адаптированы к особенностям Республики Арцах. Религиозная жизнь Республики Арцах в основном регулируется Законом Республики Арцах «О свободе совести и религиозных организациях», изучение которого показывает, что этот закон также не сильно отличается от подобного закона Республики Армения, а несколько отличий являются основным предметом обсуждения данной статьи. Они касаются числа верующих членов религиозных организаций, особенностей деятельности религиозных организаций, деятельности армянской церкви, имеющей монополию в некоторых сферах в Арцахе, полномочий государственного уполномоченного органа по делам религии в Арцахе и т.д.. В результате можем констатировать, что основными отличиями законов двух стран «О свободе совести и религиозных организациях" являются определенные изменения и дополнения в Законе Республики Арцах, которые являются следствием выявления своеобразных аспектов и особенностей религиозной жизни Арцаха, локализации Закона Республики Армения, а также подчеркивания своеобразного статуса армянской церкви в Республике Арцах.

THE LEGISLATION REGULATING THE RELIGIOUS LIFE OF THE REPUBLIC OF ARTSAKH

Pargev Barseghyan

Keywords: *Artsakh, state, religion, church, constitution, law, religious organization.*

There are almost no studies on the religious situation of the Republic of Artsakh. The peculiarities of the religious life of the Artsakh society, the legislation regulating the sphere of religion, and the multifaceted relations between religion and the state have not been critically analyzed.

The purpose of this article is to study the legislation related to religion and religious life of the Republic of Artsakh, highlighting the features that are typical of religion-state relations in the second Armenian state.

The activities of religious organizations in the Republic of Artsakh are regulated by the Constitution of the Republic of Artsakh and the Law "On Freedom of Conscience and Religious Organizations", which basically repeat the provisions of the Constitution of the Republic of Armenia and the Law "On Freedom of Conscience and Religious Organizations".

However, the comparative analysis of the legislation related to the religion of the two Armenian states shows that there are certain differences, which are due to the features and unique status of the Republic of Artsakh.

The articles related to religion in the Constitution of the Republic of Armenia are almost the same as the Constitution of the Republic of Artsakh, basically, they are repeated, and the differences are adapted to the specificities of the Republic of Artsakh.

The religious life of the Republic of Artsakh is mainly regulated by the Law of the Republic of Artsakh "On Freedom of Conscience and Religious Organizations", the study of which shows that this law does not differ much from the similar law of the Republic of Armenia. There are several differences which are the main subject of the article's discussion.

They refer to the number of faithful members of religious organizations, the peculiarities of the activities of religious organizations, the activities of the Armenian Church, which has a monopoly in some fields in Artsakh, the powers of the state-authorized body for religious affairs in Artsakh, etc.

As a result, we can state that the main differences between the laws "On freedom of Conscience and Religious Organizations" of the two countries are certain changes and additions in the law of the Republic of Artsakh, which are the result of highlighting the unique aspects and features of the religious life in Artsakh, localizing the law of the Republic of Armenia, as well as emphasizing the special status of the Armenian Church in the Republic of Artsakh.

Պարգև Բարսեղյան *- փիլ. գիտ. թեկն., դոց., ԵՊՀ կրոնագիտության ամբիոնի վարիչ*
pargevbarseghyan@ysu.am
Паргев Барсегян*, заведующий кафедрой религиоведения ЕГУ, канд. фил. наук, доц.*
Pargev Barseghyan*, Head of Chair of Religious Studies, YSU, PhD degree in Philosophy, Associate Professor*